մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածի 1-ին մասի 9.1-րդ և 9.2-րդ կետերի համաձայն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացվող հայցադիմումների համար, բացառությամբ սույն մասի 9.2-9.5-րդ կետերով նախատեսված դեպքերի, գանձվում է պետական տուրք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով գնման գնի մեկ տոկոսի չափով, բայց ոչ ավելի բազային տուրքի 10000-ապատիկից, իսկ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնման գործընթացներին վերաբերող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով՝ բազային տուրքի 100-ապատիկի չափով:

Դատարանն արձանագրում է, որ սույն գործով Հայցվորի կողմից նախապես վճարվել է հայցադիմումի ներկայացման համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը և հայցը մերժման ենթակա լինելու պայմաններում Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Ուրբան Դեվելթփմենթ» ՍՊԸ-ի, «Լեգենդ Քնսթրաքշն» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի՝ թիվ «ՁԿ-ՀԲՄԱԾՁԲ-25/6-Ա» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.10.2025 թվականի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 03.11.2025 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնել:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE93-CA02-4870-931D հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am